«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները»

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ ք.Մասիս 3-րդ հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ---------- 5

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ----------8

ԳԼՈՒԽ 2

ԽԱՂԸ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ----------10

ԳԼՈՒԽ 3

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ----------15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր կրթական համակարգում տարրական կրթությունը առավել պատշաճ ուշադրության է արժանի: Տարրական դպրոցում են հիմնականում դրվում սովորողների ինտելեկտուալ, բարոյական և հոգևոր որակների ձևավորման ու զարգացման հիմքերը: Եվրոպական որոշ երկրների կրթական հայեցակարգերում նշված է, որ սովորողների ողջ ուսումնական գործունեության հաջողության գրավականը նախադպրոցական և տարրական կրթությունն է: Օրինակ, Ֆինլանդիայում կրթության համար հատկացված ֆինանսների հիմնական մասը ծախսվում է նախադպրոցական և տարրական աստիճանի կարիքների համար: Կրթության այս աստիճանի համար պահանջվում են բարձրագույն համալսարանական կրթության ամենաբարձր որակի մանկավարժներ:

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորման, ազգային և համամարդկային արժեքների նախնական հաղորդակցմանը[1] :

Այսօր անառարկելիորեն ընդունվում է այն դիրքորոշումը, որ տարրական դպրոցը միայն գիտելիքների ձեռքբերման օղակ չէ. գիտելիքն ուսուցման այս փուլում դիտարկվում է որպես անձի զարգացման միջոց: Այսինքն՝ տարրական դպրոցում պետք է կարևորել ոչ թե գիտելիքների մեծ ծավալի հաղորդումը, այլ դրանց՝ երեխաների կարիքներին համապատասխանությունը, նրանց կողմից յուրացման ձևերը, դրանց գործածման արդյունավետությունը, հետագա ուսումնական գործունեության ընթացքում դրանց արնհրաժեշտությունը և երեխաների բարձրակարգ մտածողության ձևավորման համար պիտանիությունը: Այս խնդիրների իրականացումը պահանջում է, որ ուսուցման բովանդակությունը, մեթոդներն ու միջոցները համապատասխանեցվեն կրտսեր դպրոցականների՝ ստեղծագործական, մտավոր գործունեություն ծավալելու կարողությունների ձևավորման նպատակներին:

---

[1] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999, կետ 18:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. բացահայտել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման արդյունավետ ուղիներն ու միջոցները,

3. Անդրադառնալ երեխաների պատրաստակամության մակարդակին իմացական կարողությունների զարգացման ճանապարհին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ[1] :

Անձի զարգացման և ձևավորման վերաբերյալ աշխարհում կան մի շարք ուղղություններ, որոնց ուսմունքները իրարից տարբերվում են: Անդրադառնանք այդ ուղղություններին՝ շեշտը դնելով կրտսեր դպրոցականների զարգացման վրա:

Այսպես.կենսաբանական ուղղության ներկայացուցիչների, օրինակ՝ Զ. Ֆրեյդը, գտնում էր որ մարդը կենսաբանական էակ է և նրա վարքում ի ծնե , մեծ տեղ են հատկացվում բնազդները: Սոցիալական մոտեցման ներկայացուցիչները մարդու զարգացման ձևավորման մեջ կանխորոշիչ համարում են մարդու կյանքի պայմանները, առաջին հերթին ընտանեկան միջավայրի պայմանները: Նրանք այն կարծիքին են, որ վատ պայմաններում ապրող երեխաների մտավոր մակարդակը ցածր է լավ պայմաններում ապրող երեխաների մտավոր մակարդակներից: Այս ուղղության ներկայացուցիչները շրջանառել են «սոցիալական ընչազուրկ երեխաներ»,«բարենպաստ» և «անբարենպաստ միջավայր » հասկացությունները, որոնք նրանց համոզմամբ, կանխորոշում են «ընչազուրկ» երեխաների դանդաղ զարգացման դատապարտված լինելը:Եվ, հետևապես, սոցիալական մոտեցման ներկայացուցիչները, նման պայմաններում ապրող երեխաների համար չեն երաշխավորում մտավոր ուժերի լարում պահանջող կրթություն: Ուսումնասիրելով մանկավարժության պատմությունը, ծանոթանալով հայ և օտար ազգերի մանկավարժների հայացքներին, առաջադրած սկզբունքներին, մեթոդաբանությանը՝ առանձնացրել ենք մի քանիսին, ովքեր անդրադարձել են կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկություններին:

Հին աշխարհի փիլիսոփաներն անդրադարձել են մարդու համակողմանի և ներդաշնակ զարգացման գաղափարին: Նրանք կոչ էին անում աճեցնել հոգեպես ու մարմնապես գեղեցիկ սերունդ: Այս պահանջի հիմքում ընկած էր հոգեկան զարգացման և մարմնական գեղեցկության գաղափարը: Նրանք գտնում էին, որ մարդը դրան կարող է հասնել հոգևոր մշակույթին, արվեստին, մարմնամարզությանը հաղորդակցվելով:

---

[1] Հանրակրթության պետական կրթական չափորոշիչ, Ե., Անտարես, 2004, էջ 9:

Վաղ միջնադարում փոխվեցին այսպիսի ընկալումները և մոռացության տրվեց մարդու համակողմանի զարգացման մասին հին աշխարհի մեծ մտածողների գաղափարը: Սակայն վերածննդի դարաշրջանում մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը նոր ձևակերպում ստացավ: Հումանիստ մանկավարժները կոչ արեցին հաճույք ստանալ գեղարվեստական գրականությունից, արվեստից, երաժշտությունից: Սակայն միայն ունևոր խավը կարողացավ ապահովել իրենց երեխաների բազմակողմանի կրթությունն ու դաստիարակությունը:

Սոցիալիստները փորձեցին գտնել հնարներ բոլոր խավի երեխաների զարգացումն ու կրթությունն ապահովելու համար: Դրանց շարքերում էին Թ. Մորին, Թ. Կամպա -նելլային, Սեն- Սիմոնը, Շ. Ֆուրյեին, Ռ.Օուենին: Նրանք այն կարծիքին էին , որ ճիշտ դաստիարակության միջոցով կարելի է ստեղծել բավականության և արդարացիության սկզբունքների վրա հիմնված հասարակություն: Նրանք կարևորեցին աշխատանքային դաստիարակությունը, ինչը մինչ այդ եղել էր անտեսված:

Աճող սերնդի իմացական կարողությունների ձևավորման գաղափարը հետաքրքրել է նաև ֆրանսիացի լուսավորիչ- փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ. Դիդրոյին և ուրիշներին: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր և բարոյական դաստիարակության դերը, գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կընդգրկեն այլ բաղադրիչներ: Ի տարբերություն նրանց , Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի:

Անդրադառնանք նաև հայ դասական մանկավարժների կարծիքներին: Աճող սերնդի իմացական կարողությունների զարգացման մասին գաղափարներ են արտահայտել Դավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին, Հովհաննես Սարգավագը և միջնադարի կրթական այլ գործիչներ: Խ. Աբովյանն էլ ցանկանում էր հիմնել նոր տիպի դպրոց : Նա մեծ տեղ էր հատկացնում մտավոր կրթությանը , բարոյական , գեղագիտական , աշխատանքային և ֆիզիկական դաստիարակությանը: Միքայել Նալբանդյանը դպրոցի վերաբերյալ իր դրույթներից մեկում գրում է. «Դպրոցական կրթությունը պետք է ապահովի երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը համակողմանի զարգացումը, ձևավորի արժեքային համակարգ»[1]:

1 Մ. Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, 1954, էջ 45,2 Ղ. Աղայան, Նվեր Մանուկներին, Երևան, 1941, էջ 7,

Ղազարոս Աղայանի մանկավարժական գործունեության կենտրոնական խնդիրը եղել է երեխայի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, որի համար կարևոր էր համարում մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային դաստիարակությունը[2]: Նմանատիպ կարծիքներ են հայտնել արևմտահայ անվանի մանկավարժներ Ռ. Պերպերյանը, Հովհ. Հինդլյանը և շատ ուրիշներ: Մ. Մամուրյանը , Ս. Մանդինյանը ուղղակի պահանջում էին , որ պատանիներն ու աղջիկները դուրս գալով դպրոցից՝ ոչ միայն պետք է ունենան համակողմանի զարգացում, այլև պատրաստ լինեն կյանք մտնելու համար:

Կարծում ենք, որ այս ամենից կարելի է ենթադրել այն, որ համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով տիրապետում է գիտությունների հիմունքներին , ունի գիտական գիտելիքների մեծ պաշար , ձևավորված արժեքային համակարգ, աշխարհայացք, մտավոր, բարոյական , աշխատանքային , գեղագիտական , ֆիզիկական,, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակվածություն և զարգացում, որոնք բանական մարդու մեջ պետք է հանդես գան իրար շաղկապված, փոխկապակցված:

Հետևաբար իմացական կարողությունների զարգացմանն անդրադառնալիս պետք է հաշվի առնենք այն փորձը, որը կուտակվել և հասել է մեզ:

ԳԼՈՒԽ 1

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Մեր առջև դրված նպատակին հասնելու համար սկսենք ամենասկզբից. դեռևս ուսումնական գործունեություն ծավալելուց առաջ:

Այս խնդրի ուսումնասիրությունը մենք իրականացնում ենք մինչև ուսումնական տարվա սկսվելը: Նախ ուսումնասիրում ենք դասարանի աշակերտների անձնական գործերը, զրուցում ենք ծնողների հետ, հանգամանորեն հետաքրքրվում նրանց առողջական տվյալներով, ակնառու, ընդգծված առանձնահատկություններով: Երեխաների պատրաստակամության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին՝ գրաճանաչության գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար: Ծանոթությունն իրականացրել ենք նախապես մշակված հարցերի շուրջ կազմակերպվող ակտիվ զրույցի, պարզ առաջադրանքների կատարման ճանապարհով:

Արդյունքներն ամփոփելու համար մենք պարզեցինք յուրաքանչյուր աշակերտի.

Ա. խոսելու, բացատրվելու, հարցեր տալու, ընկերներին և ուսուցիչներին լսելու, հասկանալու, ուսուցչի հանձնարարությունները կատարելու, ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը,

Բ. հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ արտասանելու կարողությունը.

· բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ:

. հնչուններն արտասանում է ճիշտ, մաքուր, անխառն կամ որոշակի սխալներով (ունի լեզվական արատ)

. ունի խղճուկ, կցկտուր, ցածրաձայն խոսք:

. ունի արտահայտիչ խոսք:

Գ. բանավոր կապակցված խոսք.

. ունի իր տարիքին համապատասխան բառապաշար և կարողանում է տրամաբանված , պատճառահետևանքային կապերի ճիշտ մեկնաբանմամբ դատողական և գնահատող խոսք կառուցել:

. անգիր գիտի և արտահայտիչ արտասանում է փոքրիկ բանաստեղծություններ:

. գիտի և կարողանում է վերարտադրել ունկնդրած պատմվածքները, հեքիաթները(ինքնուրույն կամ հարցերի օգնությամբ), հիշում է դրանց հերոսներին, գործողությունները, վարքը, կարծիքներ է հայտնում նրանց մասին և հիմնավորում է դրանք:

Դ . Պատկերացումները շրջապատող բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ.

Ե. Տարածության մեջ կողմնորոշվելու հմտություններ ի առկայությունը.

Զ. Մի շարք անվտանգության կանոններին տիրապետելը.

Է. Ծնողների և ընտանիքի անդամների մասին ունեցած գիտելիքները և այլն:

Այսպես. հետազոտության արդյունքում գրանցեցինք հետևյալ արդյունքները:



Կարող ենք եզրակացնել, որ սովորողների միայն 65%-ն է պատրաստ ուսումնական գործունեություն ծավալել:

ԳԼ ՈՒԽ 2

ԽԱՂԸ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդկանց միջև եղած հոգեկան տարբերությունը ոչ մի տեղ այնքան վառ չի դրսևորվում, որքան մանկական խաղերում. հենց նրա համար, որ խաղն անհատի հետագա զարգացման ընթացքի նախադուռն է:

Վ. Շտերն

Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն իրենց ուրույն տեղն ունեն սովորողների իմացական կարողությունների զարգացման գործում, բայց խաղը մնում է անփոխարինելի:

Խաղը մարդուն ուղեկցել է նրա պատմական զարգացման բոլոր փուլերում: Այն եղել է ոչ միայն որպես զվարճալի զբաղմունք , այլև կյանքի տարբեր հարաբերություններում գործելու համար անհրաժեշտ կարողությունների, քննադատական մտքի ձևավորման միջոց: Մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու այն խոսքերը, թե « եթե մանկավարժությունն ուզում է մարդուն դաստիարակել բոլոր հարաբերություններում, ապա նա պետք է մարդուն ճանաչի բոլոր հարաբերություններում»1 այսօր նույնպես արդրական է: Մարդուն բոլոր իմաստներով, բոլոր կողմերով ճանաչելու համար բավական է նրան ուսումնասիրել խաղային գործունեության ժամանակ:

Խաղերի բազմազանությունը տարբեր բնույթի արգելքներ է ստեղծում նպատակին հասնելու՝ հաղթելու ճանապարհին: Այդ արգելքները հաղթահարելու ժամանակ յուրաքանչյուր երեխա դրսևորում է ինքնատիպ վարք՝ ուժ, ճարպկություն, խարդախություն, հնարամտություն, խելք,գիտելիքներ, կռահում, քննադատում և այլն:Հենց այդ արգելքների հաղթահարման գործընթացն էլ նպաստում է երեխաների ընմբռնողականության, ուշադրության, հիշողության, կամքի, դիտողունակության, մտածողության, երևակայության զարգացմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը,այդ ուղղությամբ արժեքավոր ունակությունների ձևավորմանը:

Այսօր կրտսեր դպրոցական տարիքի երեխաներն ունեն չափազանց հետաքրքիր ու զարգացնող խաղալիքներ, խաղում են բազմաշերտ մտավոր գործունեություն պահանջող ծաղեր, էլ չենք խոսում համակարգչի ու համացանցի ընձեռած հնարավորությունների մասին:

---

1 К. Д. Ушинский , Педагогика, М., 2019, стр. 80,

Մեր ուսումասիրությունները, գործընկերների և ծնողների հետ անցկացրած զրույցները, իրականացրած դասալսումները մեզ բերել են այն եզրակացության, որ դպրոց ընդունվող ոչ բոլոր երեխաներն են տիրապետում ուսումնական գործունեություն ծավալելու համար չափազանց կարևոր այս ունակություններին, որոնք, բնականաբար, պիտի ձևավորվեն ու զարգանան դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների դասերի ընթացքում՝ ստեղծելով անձի բազմակողմանի զարգացման հնարավորություններ:

Խաղի տեսությամբ զբաղվող մասնագետները ներկայացնում են խաղերի դասակարգման բազմաթիվ մոտեցումներ (Կապտերև Պ. Ֆ, Ամոնաշվիլի Շ. Ա, Վիգոտսկի Լ . Ս, Էլկոնին Դ. Բ. և այլք): Ըստ էության , խաղերի բոլոր տեսակներն էլ, անկախ նրանց նպատակադրումներից, վերջին հաշվով, նպաստում են երեխաների մտքի և ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:

Ընդգծելով մանկավարժական գործընթացում խաղերի օգտագործման կարևորությունը՝ Պ. Ֆ. Կապտերևը գրում է. «Տարբեր պատճառներով զարգացման մակարդակով իրենց տարեկիցների հետ մնացող երեխաները դպրոցում առանց խաղի փոխանակ զարգանան, կսկսեն հիմարանալ, գորշ, անբովանդակ, անիմաստ կյանք վարել, ժամանակը անցկացնել ապարդյուն: Եթե ուսուցիչն այնքան խելամիտ լինի, որ գիտելիքները կապի խաղերի հետ, կարողանա այդպիսի երեխաներին ակտիվ մարմնական գործունեություն ներկայացնող խաղային գործունեությունից հմտորեն տանել դեպի ուսումնական խաղաղ, կլանված, համեմատաբար նստակյաց գործունեություն, ապա նա ձեռք կբերի այսպիսի երեխաների ընդունակությունները բացելու բանալին, կկարողանա կառավարել նրանց զարգացումը և ցուցաբերել էականորեն կարևոր, անգնահատելի ծառայություններ նրանց ողջ հետագա կյանքում»[1]:

Այժմ անդրադառնանք այն խաղերին, որոնց միջոցով մենք փորձել ենք զարգացնել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունները:

Հատապտուղ ենք հավաքում

Խաղի նպատակները. խաղն , ըստ էության շարժուն է, սակայն կարելի է նաև լուծել ուսումնական խնդիրներ:

Օրինակ՝ խոսել ծառերի և թփերի, մրգերի և հատապտուղների տարբերությունների, ինչպես նաև նրանց օգտակար կատկանիշների մասին: Զարգացնել երեխաների աչքաչափը, իմացական մակարդակը:

[1] П .Ф. Каптерев, Дидактические очерки, Петроград, 1915 стр .350

Խաղի ընթացքը: Խաղն իրականացվում է նույն եղանակով. միայն նկատի պետք է ունենալ, որ հատապտուղ հավաքելու համար շատ կռանալ և բարձրանալ պետք չէ: Հարկավոր է պարզապես պատկերացնել թուփը, պտտվել թփի շուրջը և ձգտել կամ իջնել թփի բարձրության սահմաններում:

Ուսուցիչ - երեխաներ, մենք գտնվում ենք անտառի բացատում, այստեղ հասունացել են տարբեր հատապտուղներ՝ մոշ, հաղարջ, մորի. եկե՛ք հավաքենք դրանք և լցնենք զամբյուղը: Բայց միայն այն հատապտուղն ենք քաղում, որի մասին դուք կլսեք տեղեկություն:

Ավարտիր բառերը

Խաղի նպատակները. երեխաներին նախապատրաստել վանկի մասին նոր գիտելիքների ձեռքբերմանը, սովորեցնել բառը վանկատել:

Անհրաժեշտ պարագաներ. բազմավանկ անուններ ունեցող առարկայական նկարներ և խաղալիքներ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչ- ես հիմա կասեմ ձեզ ծանոթ անունների առաջին վանկը, դուք պետք է ավարտեք բառը՝ ավելացնելով մեկ վանկ: Ուսուցիչը արտասանում է թա վանկը, երեխաներն ավելացնում են վանկեր՝ ստանալով Թամար, Թաթուլ, Թալին, Թաթիկ և այլ բառեր: Այս խաղը կարելի է կազմակերպել նաև այլ բառերի շուրջ: Մենք կազմակերպել ենք տարբեր բնագավառների շուրջ:

Նույնը կարելի է կազմակերպել բազմավանկ բառերի շուրջ՝ օգտագործելով առարկայական նկարներ, խաղալիքներ, առարկաներ:

Որոշիր գծապատկերը

Խաղի նպատակները. զարգացնել երեխաների տեսողական ընկալումը, հնչյունային լսողությունը, սովորեցնել տարբերել ձայնավորներն ու բաղաձայնները:

Անհրաժեշտ պարագաներ. տարբեր բառերի գծապատկերներ, դրանց համապատասխան առարկաները կամ նկարները:

Խաղի ընթացքը. Դասարանը բաժանվում է խմբերի: Յուրաքանչյուր խմբի առջև դրվում են տարբեր առարկաների անվանումների գծապատկերները:

Առաջադրանք. ուսուցիչը ցույց է տալիս տարբեր առարկաներ կամ դրանց նկարները և տալիս հանձնարարություն.

Ուշադիր դիտեք ձեր սեղանների վրա դրված գծապատկերները և այս նկարը (կամ առարկան): Ո՞ր խմբի մոտ է այս առարկայի գծապատկերը:

Հրաշալի պարկ

Խաղի նպատակները. զարգացնել երեխաների հնչյունային լսողությունը, ամրակայել բառի մասին երեխաների ունեցած գիտելիքներն ու կարողությունները: Ձևավորել տրամաբանված խոսք կառուցելու, նախ մտածելու, ապա խոսելու կարողությունները: Ամրակայել ձայնավորների և բաղաձայնների մասին երեխաների գիտելիքներն ու կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ. փոքրիկ պարկ՝ հեքիաթային պայծառ նկարներով: Պարկի մեջ լցնել զանազան իրեր, խաղալիքներ. շուն, կոճ, մատիտ, նուշ, ռետին և այլն:

Խաղի ընթացքը. Երեխաները մեկ-մեկ մոտենում են, վերցնում են պարկը, ձեռքը մտցնում մեջը, բռնում պարկի իրերից որևէ մեկը և այն նկարագրում, ապա ասում, թե քանի վանկ, հնչյուն ունի տվյալ իրի ամվանումը: Դասարանը բառի հնչյունային և վանկային կառուցվածքով որոշում է, թե ինչ առարկա է պարկի մեջ շոշափում իրենց դասընկերը:

Խոսքի նմուշի համար սկսում է ուսուցիչը.

-Ես մատներով շոշափում եմ մի առարկա, որն ուտում են: Այն կոշտ է, ծայրերըսուր են, համեղ է, ունենում է կեղև, բայց պարկի մեջ է առանց կեղևի: Այդ ուտելիքի անունը միավանկ է, ունի 3 հնչյուն:

Երեխաները մտածում են, որոշում , թե ինչ առարկայի մասին է խոսքը: Ուսուցիչը ցույց է տալիս իր հանած առարկան՝ նուշը: Երեխաները հաշվում են նուշ բառի հնչյունների քանակը, գծում բառի գծապատկերը: Որոշում են հնչյունների տեղը բառի մեջ:

Ուսուցիչը խնդրում է դասարանին խմբով արտասանել այն հնչյունը, որը լսում են բառասկզբում: Երեխաները երկար արտասանելուց հետո «հայտնաբերում են», որ ն հնչյունը երկար արտասանելուց հետո «կորչում է», լսբում է ը: Նույն ձևով նրանք նկատում են, որ այդպես է լսվում նաև շ հնչյունը:

Ուսուցիչ - Իսկ հիմա եկեք արտասանենք այն հնչյունը, որը լսվում է բառամիջում: «ու՛. . . » ,- երկար արտասանում են երեխաները և աշխուժորեն նկատում, որ ու հնչյունը մինչև վերջ լսվում է: Այսպիսի աշխատանք է կատարվում մի քանի միավանկ բառերի շուրջ՝ խորացնելով բացատրությունը:

Ո՞րն է ճիշտ

Խաղի նպատակները.երեխաների բառապաշարը հարստացնել հրաշալի բառերով և արտահայտություններով, դաստիարակել քաղաքավարի հաղորդակցվելու ունակություն, զարգացնել քննադատական միտքը:

Անհրաժեշտ պարագաներ. խաղում նկարագրված թեմաներով առանձին նկարներ և դրանց համապատասխան հրաշալի բառեր:

Խաղի ընթացքը. Դասարանը 1-4 հաշվով բաժանում ենք 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալիս ենք նմարներ և դրանց համապատասխան բառեր(նկարներում պետք է ներկայացվեն ինչպես բարեկիրթ, այնպես էլ ոչ բարեկիրթ վարվելաձևերը, իսկ առանձին թղթերի վրա լինեն «խնդրում եմ»,«ներողություն»,«շատ բարի»,«թո՛ղ»,«չե՛մ տա»,«տո՛ւր»,«տո ւր , խնդրո ւմ եմ» և այլ բառեր ու արտահայտություններ, որոնք համապատասխանում են նկարների բովանդակությանը): Երեխաները խմբով ընտրում և կողք կողքի են դնում բառերին համապատասխանող նկարները, բառերն ու արտահայտությունները: Ապա խումբը կորոշի, թե որ արտահայտություններն են բարեկիրթ, որոնք են անբարեկիրթ, և խումբը կընտրի մեկին ով քննադատորեն կներկայացնի խմբի կարծիքը:

Ո՞վ է նա : Ի՞նչ է նրան պետք

Ո՞վ է նա, ի՞նչ է անում

Դետեկտիվ,

Մենք հարցնում ենք, դուք պատասխանում եք.

Այս և նմանատիպ բազմաթիվ խաղերը նպաստում են սովորողների քննադատական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը , ապահովում նրանց մասնակցությունը դասի, զարգացնում են սովորողների իմացական կարողությունները:

ԳԼՈՒԽ 3

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մենք սահմանել ենք որոշակի քայլարշավ մեր նպատակին հասնելու համար.

1. Ուսումնական նյութը շարադրել փայլուն օրինակների ու փաստերի հիման վրա: Ապացուցել, հիմնավորել , բացահայտել:

2. Ուսումնական նյութը մեկնաբանելիս ցուցաբերել դիալեկտիկական մոտեցում, հենվելով նրա օրենքների ու կատեգորիաների վրա:

3. Ուսումնական նյութի մեջ բացահայտել դաստիարակչական կողմը:

4. Սովորողների մեջ արթնացնել բոլոր հարցերն ինքնուրույնաբար պարզաբանելու, բացատրելու, իմաստավորելու, ընդհանրացնելու ձգտում:

5. Ուսումնական նյութը հաղորդելիս օգտվել միջառարկայական կապերից:

Մարդն առհասարակ, երեխաները՝ առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել: Այսինքն՝ երեխայի համար ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը. երբ ինքն է գիտակցաբար դնում կրթական նպատակներ և ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը՝ դրված նպատակներին հասնելու համար: Այս դեպքում է միայն գիտելիքն անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն: Ուստի վստահորեն կարող ենք ասել.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍԵՐՏՈՐԵՆ ԿԱՊՎԱԾ Է ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԻՑ, ՄԱՏՈՒՑՎՈՂ ՆՅՈՒԹԻՑ , ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁԻՑ, ՆՐԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԱԿՏԻԿԱՅԻՑ, ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՑ , ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՃԻՇՏ ԸՆՏՐՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԻՑ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻՑ :

Սրանք թերևս ամենից կարևորն են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մարդուն բոլոր իմաստներով, բոլոր կողմերով ճանաչելու համար բավական է նրան ուսումնասիրել խաղային գործունեության ժամանակ:

2. Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել:

3. Կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները լավագույնս բացահայտվում են խաղի միջոցով:

4. Կրտսեր դպրոցականներին կրթելիս և դաստիարակելիս խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Աղայան Ղ. , Նվեր Մանուկներին, Երևան, 1941,

Հանրակրթության պետական կրթակարգ, Ե. , Անտարես, 2004,

ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Կրթության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999, կետ 18:

Նալբանդյան Մ. , Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, 1954,

Каптерев П. Ф. , Дидактические очерки, Петроград, 1915: